զաքն և տուերէին, և ոչ երկնչէին յիշխանութենէ Սուլթանին. Բդեշխ քաղաքին սակաւաթիւ զօրօք անկարող էր զսպել զնոսա, մինչեւ համարձակիլ նոցա մտանել յԵրուսաղէմ և կողոպտել զրաս և գտանէին, և Բդեշխն չկարեր ասել ինչ։

Պատճառ յափշտակելոյ զՍիոն, խնդրեալ են տաճիկք սակաւ մի քացախ 'ի միաբանութենէ Լատինաց, և նոցա զլացեալ՝ յափշտակեն, այսպէս գրի 'ի նամակին գրեալ առ Աղէքսանդր Կաթուղիկոս, յետ իբր 150 ամաց։

Ահաւասիկ պատճեն Հայկական ձեռագիր յիշատակարանին, զոր խոստացաք 'ի վեր անգր։

Ի թուին Հայոց ՌԳ (1554)։ Սկիզբն եղեւ նորոգութեան և հաստատութեան սիրոյ դաշին ազգին Հայոց ընդ Հռոմայեցիս, 'ի ձեռն Տէր Անդրիաս և Տէր Աստուածատուր Ս. Արք եպիսկոպոսաց առաջնորդաց առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի հանդերձ ամենայն միաբան եղբայրութեամբ։

Եւ այս եղեւ ըստ այսմ օրինակի։ Ի ժամանակս իշխանութեան Սուլթան Սիւլէյման Կայսեր Թուրքաց՝ առին Արաբացիք զվանս Սիոնի 'ի ձեռաց Լատինաց և արտաքսեցին զնոսա անտի, եւ նոցա տարակուսեալ դեգերէին այսր անդր չգտեալ տեղի բնակութեան։ Ապա խորհրդով գլխաւորաց նոցին, գնացին ոմանք 'ի նոցանէ 'ի Կոստանդինուպոլիս, եւ մատուցին գիր աղաչանաց առ արքայ, խնդրելով տեղի բնակութեան յԵրուսաղէմ. Սուլթանն հրաման եւ նոցա ընտրել տեղի, ուր և ինքեանք հաճեսցին և բնակեսցին անդ։ Սակայն Լատինք հաստատեալ էին 'ի միոս իւրեանց ունել վանս ինչ, որոյ վասն բազում անգամ 'ի ժողով գումարեալ խորհէին 'ի վերայ այսր, բայց չկարացեալ գտանել զելս հնարից, դիմեցին առ ազգն Հայոց, յիշելով զառաջին սէրն և զմիաբանութիւնն զոր ունէին յառաջագոյն 'ի Հարց անտի, գերագոյն համարեալ քան զամենայն ազգս քրիստոնէից, և յայտ արարին սիրով և մտերմաբար զխորհուրդս իւրեանց՝ քահանայից և գլխաւորաց ազգին, թէ ո՞րպէս յափշտակեցաւ Վանքն Սիոնի, եւ թէ զիա՞րդ կրօնաւորք նոցին առանց տեղւոյ և բնակութեան թափառին աստանդական, ապա